ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
թիվ 669
« 17» դեկտեմբերի 2018թ.

✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. դեկտեմբերի 17-ի 110-Ա և 111-Ա որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2018թ. № 110-Ա

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԻ 06-056-0023-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.06.2002Թ. ՔՂՎԱԾՔՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ֆլորիկ Խուդուի Պողոսյանի, Ավետիք Արտուշի Պողոսյանի և Արևիկ Արտուշի Պողոսյանի կողմից լիազորված անձ Սարգիս Հրաչիկի Մկրտչյանի ներկայացված դիմումը, համայնքի ղեկավարի կողմից 20.06.2002թ. տրված քաղվածքը, 02.10.2018թ. թիվ 2676 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0023-0001 ծածկագրի տակ գտնվող 1519.7 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0023-0001 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 1519.7քմ.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 1519.7քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Ֆլորիկ Խուդուի Պողոսյանին ½ բաժնեմասով, Ավետիք Արտուշի Պողոսյանին ¼ բաժնեմասով և Արևիկ Արտուշի Պողոսյանին ¼ բաժնեմասով, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, յուրաքանչյուրին իրեն հասանելիք բաժնեմասով:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0023-0001 ծածկագրի տակ գտնվող 1519.7քմ. մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 66.84 քմ. մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 3.63քմ. մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 7924քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 4.76քմ. մակերեսով պատշգամբի, 9.37քմ մակերեսով աստիճանահարթակի, 29.55քմ մակերեսով անասնաշենքի, 16.67քմ. մակերեսով ծածկարանի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Ֆլորիկ Խուդուի Պողոսյանին ½ բաժնեմասով, Ավետիք Արտուշի Պողոսյանին ¼ բաժնեմասով և Արևիկ Արտուշի Պողոսյանին ¼ բաժնեմասով, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

4. Հաստատել 06-056-0023-0001 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, 3-րդ փողոց, բնակելի տուն 6:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2018թ. դեկտեմբերի 17
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » դեկտեմբերի 2018թ. № 111-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2018թ. դեկտեմբերի 24-ին ժամը 11:00-ին Բովաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի հաստատում:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

2) Լոռի Բերդ համայնքի Կողես և Սվերդլով բնակավայրերի դպրոցների լուսամուտների մասնակի փոխպրինման համար գումար տրամադրելու վերաբերյալ դիմումի քննարկում

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

3) «Ուռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի շենքի տակ գտնվող 450մ^2 հողատարածքը պետությանը նվիրաբերելու մասին

(Զեկուցող Ա. Չոբանյան)

4) Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

5) Լոռի Բերդ համայնքի բնակիչներին 2017-2018թթ. ընթացքում չտրամադրված սոցիալական օգնությունների վերաբերյալ, բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

6) Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի բնակիչ Զավեն Թունյանի կողմից ներկայացված դիմումի քննարկում:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

7) Լոռի Բերդ համայնքում 2019թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող Ա. Զոբանյան)

9) Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ 2018թ. դեկտեմբերի 24

գ. Լոռի Բերդ

Նախագիծ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

Անցկացման վայրը. Բովաձորի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր

Անցկացման ժամանակը. 24.12.2018թ. ժամը 11:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:
2. Լոռի Բերդ համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի հաստատում:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

3. Լոռի Բերդ համայնքի Կողես և Սվերդլով բնակավայրերի դպրոցների լուսամուտների մասնակի փոխարինման համար գումար տրամադրելու վերաբերյալ դիմումի քննարկում

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

4. «Ուռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի շենքի տակ գտնվող 450մ² հողատարածքը պետությանը նվիրաբերելու մասին

(Զեկուցող Ա. Չոբանյան)

5. Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

6. Լոռի Բերդ համայնքի բնակիչներին 2017-2018թթ. ընթացքում չտրամադրված սոցիալական օգնությունների վերաբերյալ, բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

7. Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի բնակիչ Զավեն Թունյանի կողմից ներկայացված դիմումի քննարկում:

(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)

8. Լոռի Բերդ համայնքում 2019թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող Ա. Չոբանյան)

9. Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

10. Ելույթներ, առաջարկություններ:
11. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ